

պատուելիներուն գրութեան գէմդը-
ներուն պատճառները յայտնելէ ե-
տեւ, պատմեց նաեւ այն հարածանք-
ներն ու ստուգանքներն, որոց ինք
և իւր հետեւորդներն ենթակայ ե-
ղած էին :

« Յետոյ Պ. Հորմիշտ Բառամ Լաօսը
առաւ, և Միլիթին վերջանալէն ա-
ռաւ թրիսթիւմ կանանիկսը ցու-
ցուց թէ Հայ արքայականացուն Անդ-
ղիոյ Առաջնորդին՝ (այն է Քէնթըր-
պէրի արքայականութիւն) օգնութիւն
ներն իւր կողմն ունէր՝ ընթերցելով
այն պատմագրութիւն, որովք Քէնթըր-
պէրի արքայականացուն զայն Անդրի-
ական եկեղեցւոյն համակրութեան ու
հոգածութեան կը յանձնարարէր : »

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Բեդրապուրի 2 մարտ
Ռուսիոյ պաշտօնական լրագիրը Գեր-
մաներէն և Ռուսերէն լեզուաւ նամակ
մը կը հրատարակէ Ալեքսէյ Կոլոմեյցե-
րին ուղղեալ՝ գահակալութեան Չարդ տա-
րեգարձին առթիւ : Գերմանիոյ կայսրը
կըսէ այս նամակին մէջ թէ ինքզինք
կը ջանար իր համարի այն բարեկամութեան
պատճառաւ, որ քան և հինգ տարիէ ի
վեր կը միացնէ Գերմանիոյ և Ռուսիոյ
կայսերական ընտանիքները : Յիշեալ նա-
մակին ներքեւ Պիտերս Իլլիանին ալ ըս-
տարաբարութիւնը կայ :

Վիէննա 2 մարտ
Ռուսիոյ դեսպան Պ. Կոլարիւն Ոչնչա-
կանաց վերջին դաւադրութիւններուն մեղ-
սակից ամբաստանեալ Ռուս հարստակի մը
Ռուսական կառավարութեան յանձնուելը
խնդրեց Աւստրիական կառավարութեանէն :

Այս տարած հասած հետաքննիչ

Բեդրապուրի 5 մարտ
Այսօր կէս օրէն յետոյ ժամն երկու-
քին երիտասարդ մը գործադիր յանձնա-
խմբին նախագահ Լորիս Մէլեքով զօ-
րավորին վրայ գնդակ արձակեց ձիւղ-
անոր քովէն՝ երբ զօրավարն իւր բնակա-
րանը կը մտնէր :

Գնտարը զօրավարին հանդերձին մէ-
ջէն անցաւ առանց վայն վիրաւորելու :
Լորիս Մէլեքով ինքնին ձերբակալեց
ոճրագործը :

Գահաժառանգ կայսրորդին նոյն օրն
այցելութիւն տուաւ Լորիս Մէլեքով զօ-
րավարին :

Հռոմ 5 մարտ
Զրոյց կայ թէ Քորթի կոմսը Փարիզի
Իտալական դեսպան պիտի անուանի, և
այժմ Ռաչինիթօնի դեսպան Պարօն Պլան
ալ Կ. Պոլսոյ դեսպան պիտի անուանի իտ-
ալական Քորթի կոմսին :

Լոնտոն 5 մարտ
Սթենտըրտ լրագիրը Բեդրապուրիէն
ստած հետեւեալ հեռագիրը կը հրատա-
րակէ,
« Ռուսիոյ կայսրն երէկ Օսմանեան դես-
պան Շաքիր փաշան ընդունելով, յոյս
և փափակ յայտնեց նմա որ երկու եր-
կիրներուն միջև բարեկամական յարաբե-
րութիւնը շարունակին : »

Լոնտոն 3 մարտ.	
Օտ. Բան.	10 3/4
Փոխ. 1865	12
» 1869	11 7/8
» 1871	65 1/2
» 1872	18 1/2
» 1873	41
» Եղիպտ.	85 3/8
Անգլ. Բան.	97 13/16
Փարիզ 5 մարտ.	
Օտ. Բան.	11
Դադլ. »	8 0/0
» »	116.50
» »	Նոր 85.65

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վէհ. Սուլթանն առաջին աստիճանի
Շէֆաքաթի պատուանշանը տուաւ
Տիկին Ժ. Զարիֆիի :

Յառաջիկայ մարտ ամսէն սկսող
երկուական տարւոյն երկուայոյցը
(Պիւլտօէ) շինուելով նախարարոյ
խորհրդին զրկուեցաւ : Հաստիքի
գումարն է տասն և հինգ ու կէս
միլիոն Օսմանեան ոսկի, ծախսեց
գումարն ալ քանն երկու միլիոն է,
որով հինգ ու կէս միլիոնի բաց կայ :
Պատերազմական նախարարու-
թեան հինգ միլիոն ոսկի յատկա-
ցած է, ծովային նախարարութեան
մէկ միլիոն, թիւղանօթարանին մէկ
միլիոն, ռազմականութեան համար մէկ
ու կէս միլիոն, մէկ միլիոն 300 հազար
ոսկի ալ արքունի գանձուն յատկա-
ցած է :

Շիշլիի ցաւալի դէպքին ժամա-
նակ ծանրապէս վիրաւորեալ Գոմա-
րօֆ Ռուս գնդապետը՝ չկրնալով ա-
ղաթիլ երէկ տաւաօտ մեռաւ : Ոճրա-
գործ Տէլի Մէհմէտ ալ ոստիկանու-
թեան հետ ըրած կռուոյն ժամանակ
առած վէրքերէն մեռնելու վրայ է :
Կը կարծուի թէ մահուան դատաւը-
ճիւն անոր մեռնելէն յետոյ պիտի
դորձադրի :

Վախճանեալ գնդապետը Ռու-
սիոյ դեսպանատան ղեկավարական կը-
ցորդ, 29 տարեկան ուսեալ և քաջ
երիտասարդ մ'էր, և խղճական կը-
րօնքէ պատուաւոր Ռուս ընտանիքի
մը կը վերաբերէր : Բլէյկայի պատե-
րազմաց մէջ քաջութիւն ցուցած էր,
և անգամ մը վիրաւորուելէ ետեւ՝
բժշկուած և նոր թուրքօ—Պուլղա-
րական յանձնախումբը դժուր հա-
մար պատուիրակ կարգուած էր :
Թաղման հանդէսն այսօր տեղի կու-
նենայ :

Շրջաբերութեան հանուած թըղ-
թագրամն անուանապէս տասն և վեց
միլիոն իրնելով, եղած հաշիւներէ կը
հասկցուի թէ մինչև ցարդ տասն
միլիոնէն քիչ մ'աւելին 18 ամսուան
միջոցի մէջ այրուելով ջնջուած է, և
այժմ հասարակութեան ձեռքը վեց
միլիոնի անուանական գումարէն նը-
ւաղ թղթագրամ մնացած է :

Լէվենթ Հէրբէ կըսէ թէ Հռո-
տոյն լեբանց մէջ երեան ելած աւա-
ղակներն, որոց գէմ թէ՛ Սեբիանու-
պօլսոյ և թէ՛ Արեւելեան Բուլգարի
կուսակալներն ոստիկաններու խում-
բեր զրկած էին, Բոմաք ապստամբ-
ներ են, որք թշուառութեան և կա-
րօտութեան մղուելով տեղական իշ-
խանութեանց դէմ սպառնալուծ են՝
անպաշտպան գիւղեր առաւտակելու
համար : Իրենց հողերը ձեռքերէն
առնուած խել մ'իսլամը ալ յուսա-
հատելով՝ յիշեալ ապստամբաց հետ
միացեր են : Կերեկ թէ այս վերջին-
ներն Օսմանեան երկիրներուն մէկ
ուրիշ կողմն համանման վիճակի մը
մէջ գտնուող ժողովուրդէ մը նուազ
համբերատարութիւն ունենին . . . :

Սինճ գնդապետը տակաւին չլըր-
ցաւ աղաթիլ : Սէլանիկի Միգդիական
ընդհ. հիւպատոս Պ. Պրենթ բանակ-
ցութեան մտած է Նիքօ աւաղակա-
պետին հետ, Կըրուի թէ Անդրիացի
գնդապետին կինն ալ լեռը տարուած
է անոր հետ : Նիքօյի հայրն և եղբայրը
Սէլանիկի մէջ բանտարկեալ են :

Բժշկական քաղաքային դպրոցին
անօրէնութիւնը թուրքերէն լեզուաւ
բժշկական լրագիր մը հրատարակել
պիտի սկսի ի մօտոյ :

Երէկ ոստիկանութեան նախարա-
րութիւնն իւր պաշտօնատարաց ամ-
սական վճարեց :

Ելուածից նախարարութիւնը քը-
սան և հինգ հազար ոսկւայ արժու-
ողութեամբ մանր Մէհմէտի կոնսէլ կու-
տայ արքունի փողերանոցին մէջ, և ի
մօտոյ շրջաբերութեան պիտի հանէ
այս նոր դրամները :

Զրոյց ելած էր թէ մարտէն ետքը
աւերութեան պաշտօնատարաց ամ-
սականները կէս աւ կէս պիտի նուա-
զին : Վաղըք տու կը հանէ այս զրոյ-
ցին, և կըսէ թէ եղած որոշումն այլ
և այլ պաշտօնատանց ծախքերը քիչ
մը նուազեցնելու վրայ միայն կը կա-
յանայ :

Այս դիշեր մեծ պարահանդէս կը
տրուի Պարսկական դեսպանատունն,
ուր հրաւիրեալ են նախարարք, դես-
պանք, և այլն :

Մինչև ցարդ Շուվու գտնուած
կայսերական երրորդ զօրաբանակին
կեդրոնատեղի որոշուեցաւ Սեբիա-
նուպօլիս, ուր երտուն և հինգ հա-
զար զօրք պիտի կենայ :

Մայրաքաղաքի ֆար տիւ Պոս-
ֆօր լրագիրն հետեւեալ կերպիւ կը
պատմէ վաղոսի դէպքը, զոր վաղըք
բոլորովին տարբեր կերպիւ ներկա-
յած էր վերջին թիւերէն միայն մէջ .

« Վաղոսի մերձակայ գիւղերէն գիւ-
ղերէն միայն Յոյն երեւելիներն որոշած
էին իրենց մէջ միութիւն մը կազմել
Թեսաղոյ և Նախիլիսի աւաղակաց դէմ
իրենք զիւրեք պաշտպանելու համար :
Տեղական իշխանութիւնը ապստամ-
բական դիտաւորութիւններ կատա-
ծելով՝ ձերբակալեցին այս Յոյն երեւե-
լիներն, որք վեց հոգի էին, և վո-
լոս զրկեցին ընդ հակառակութեամբ :
Հոն համառօտիւ դատուելով յաք-
տոր գատապարտեցան : »

« Ասոր վրայ յիշեալ Յոյներն Օս-
մանեան զրահաւոր մը տարուեցան, և
քանի մ'օր յետոյ Ֆրէսինէի դադ-
դիական շոգենաւուն այն տեղէն անց-
ներէն օգուտ քաղելով՝ վաղոսի իշխա-
նութիւնը՝ յիշեալ շոգենաւը փոխադ-
րեցին զանոնք և տասն և հինգի
չափ ոստիկանաց ուղեկցութեամբ Կ.
Պոլիս զրկեցին : »

« Թեսաղոյի Եւրոպական հիւպա-
տոսք՝ այս իրողութիւնն իմանալով՝
գիտողութիւններ ըրին տեղւոյն իշ-
խանութեանց, և այս խոստումը ձեռք
բերին թէ Յոյն երեւելիները գատա-
պարտող վճիռը պիտի վերաքննուի,
և թէ առ այժմ իրենց երկրէն չպի-
տի հեռացուին : Բ. Գուռն ալ նոյն
խոստումն ըրաւ դեսպանաց : Բայց
յիշեալ Յոյներն ի վերջոյ Կ. Պոլիս զըր-
կուած ինքելով, Հիւպատոսք, և մա-
նաւանդ Գաղլիոյ և Յունաստանի
հիւպատոսները Կ. Պոլիս գտնուող
դեսպանաց հեռադրեցին եղելութիւ-
նը : Միւս կողմէ Գաղլիական շոգե-
նաւը նաւահանգիստ մտնելուն պէս,
Օսմանեան ոստիկաններ և սպայներ
շոգենաւուն վրայ գնացին և Յոյնե-
րն առնուլ ուղեցին, բայց նաւապե-
տին, որ կերեկ թէ վաղոսէն մեկնե-
լէ առաջ Գաղլիոյ հիւպատոսին հը-
րահանգներն ընդունած էր, մերժեց
այն պահանջումն և յայտնեց թէ դա-
նոնք ինք Գաղլիական իշխանութեան
միայն պիտի յանձնէր : »

« Այս միջոցիս Գաղլիոյ և Յու-
նաստանի դեսպանատանց թարգմա-
ներն եղելութիւնն իմացուցին Սալա-
փաշային, որ ցաւ յայտնեց լսելով
թէ վաղոսի իշխանութիւնը ամբառ-
տանալները Կ. Պոլիս զրկած էին,
բայց ըսաւ թէ այս ուղեւորութիւնը
վնաս չպիտի պատճառէր անոնց, և

թէ կեդրոնական կառավարութեան
քով գտնուելուն պատճառաւ՝ նոյս
գատն տալիս վրոթով պիտի տեսնը-
ուի և ժամ առաջ պիտի զրկուին ի-
րենց տեղերը :

« Յակոբի կերեկ թէ այս ապահո-
վութիւնը դժացուցիչ չգատուեցան,
և Գաղլիական դեսպանատունէն հը-
րաման եղաւ նաւապետին որ Յոյն
երեւելիները մի միայն Պիլէոն (Յու-
նաստան) ցամաք հանէ, ուր կերթա-
րինք : Շոգենաւը չարաթ օրը մայրա-
քաղաքէն մեկնեցաւ : »

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
Երէկ իրկուս զոգուեցաւ	11.30
Այս առաւօտ բացուեցաւ	11.27
Կէս օրին	11.26
Բուլգարի երկաթուղի	Ֆր. 37 75
Թիւրքիստ	Լր. 10.10
Խրամուայ	Օտ. Լր. 3.50
ԸՆԹԱՅԻՆ ԱՐԺԵԹՂՈՅ	
20 Փետրվար	
Ստիթիէ Ժէնէրալ Բամ. Անգլ. Լր. 4.5	
» Փոխանակութեան	3.5
Կ. Պոլսոյ Պաշտպանին	6 25
Քրէտի Ժէնէրալ	3.29
Կոստ. 1863	Ֆր. 60
» 1865	» 62
» 1869	» 62 25
» 1872	» 18
» 1873	» 54

ԸՆԹԱՅԻՆ ԴԻՍԿՈՅ	
21 Փետրվար	
Անգլ. Լր.	Մը. 110 3
Նարթոն սակի	» 87 15
Իմէնիսի Ռուս	» 90 4
Ռուսական Թղթագրութ. 8 րդ. 52 քարէք	
Գլըբուլի	Մը. 51 30
Մէհմէտի տարբերութիւն	» 8 3
Հինգ նոյս	» 40
Մէթալիք	» 40
Պրինճ	» 470
» 5 փարանոց	» 240

ԱԶԳԱՅԻՆ

Քոմարոֆի գնդապետին յուղար-
կաւորութեան առթիւ Ռուսաց դես-
պանատունէն դիւր եկած իրնելով ի
Պատրիարքարան, Ս. Պատրիարք Հայ-
ը վարդապետ մ'և քանի մը Գա-
հանայ զրկեց Բերա :

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Մուշ 28 յունի 1880
... Խմբագրապետ
Մինչդեռ Բ. Գուռն խեղճ ժողո-
վրդոցս ապահովութեան համար յա-
տուկ ըննիչներ կարգելով այս նա-
հանգները կը զրկէ, Մշոյ կառավա-
րին՝ ընդհակառակն՝ ողորմելի ժո-
ղովրդեան արեւը ծծող և անպատ-
մելի չարք հասցնող աւաղակապետ-
ները բանտէն կարճակէ . ինչպէս որ
արձակուեցան իսալիլ ըստած բար-
բարոս քրդերն, որք են Մափալի
Մհէ, Խականտար, Մահմէտ, Մահ-
մուտ, Սմար, Սիլ ևս . . . :
Այս գաղանաւարոյ անձինքը Մը-
շոյ, Ղիպեան, Ղիլիէթ, Միդոն,
Բաղլու ևս գիւղերու մէջ չարք չմը-
նաց որ չգործեն, և այժմ արձակ հա-
մարձակ քրիստոնեայ ժողովուրդը
դարձեալ կեղեքելով կը չարչարեն,
և տեղական կառավարութիւնն ան-
տարբեր կը գտնուի . . . :
Մշոյ կարս գիւղի մէջ քանի ա-
միս առաջ սպանութիւն գործող հըռ-

չակաւոր Միրզա պէյի տղայ (երկ-
րորդ Լէնկիթմար) Մուսա պէյը,
տեղական կառավարութիւնը մօտ օ-
րերս արձակելու քաջութիւնը կը
գործէ . . . նաև չորս անգամ Ս. կա-
ռավարի վանքը կողոնարել տուող
կուսակցի Օսմանն (Գեր. Մամբրէ եւ
պիտիւպու բանտարկել տուած էր) և
իւր պարագայը դարձեալ արձակե-
լու մեծ ջանքեր կը տեսնուին . . .
ի զուր կաշխատի Բ. Գուսթ բարե-
նորդումն այս երկիրը մոցնել, վա-
սնն զի տեղական կառավարութեան
պաշտօնակալներուն կը վնասէ, որք
այդ բարբարոսներն իրենց ապօրինի
և փնասակար ընթացից մէջ կը քա-
ջալերեն, ինչպէս կերելի . . .

Գեր. առաջնորդն հանրական գոր-
ծով ի վան պիտի գնայ երկու օրէն
վերջը: Ս. կարապետի վանահայր Գեր.
Մամբրէ եպիսկոպոս վաղ կամ միւս
օր ի Մուշ կ'ապասուի: Բաղիշոյ վը-
սեմ: Կուսակալն անփնտ իւր պաշ-
տօնատեղին հասաւ:

Այս օրերուս սաստիկ փրքաբեր
ձիւնէն երեք Մշեցի վանահայրան և
15 բուռնակիր ձիւն խնուսի ճանքուն
վրայ խեղդուեցան:

Այս տնուր պարագայից մէջ մը-
խիթարական է տեսնել նորանոր դըպ-
րոցական ընկերութեանց կազմութիւ-
նը և օր աւուր բարգաւաճելու գե-
ղեցիկ յոյսերն, որոց շարժառիթ եւ
զող ազգասէր անձանց անունները
կուգեմ ի լոյս ածել:

Ա. Նոր-Հայ անուն ընկերութիւն,
չնորհիւ Աստուածատուր էֆէնտի,
որ գոհութեան արժանի է:

Բ. վահանեան ընկերութիւն, որ
Ձիւնաբէթ գիւղի մէջ հաստատուել է,
ունի իւր մէջ դպրոց մը չնորհիւ Նո-
րատունիեան Մեծ. Թադէոս էֆէն-
տի, և Պոլսեցի Սիւտեան Պետրոս
էֆէնտի:

Գ. Ուսումնասէր ընկերութիւն,
Մշոյ մէջ չնորհիւ Մեծ. Յովհաննէս
Մկրտիչ և Յակոբ Էֆէնտիներու ըզ-
գալի քայլափոխներ կընէ:

Հայրենասէր ընկերութիւն (գարձ-
եալ) չնորհիւ Ղազար և Պօղոս Էֆէն-
տիներու ոչ նուազ գոհութեան ար-
ժանի է:

Ե. Իրաւասէր ընկերութիւն, չը-
նորհիւ Մեծ. Յարութիւն Էֆէնտի
օր աւուր բարգաւաճելու գեղեցիկ
յոյսերը կը ցըցնէ:

Զ. Բարեխիտ ընկերութիւն, որ
15 տարիէ ի վեր իւր նպատակը կը
շարունակէ, քանի ամիս յառաջ դըպ-
րոց մը բացաւ Սեմալ գիւղը յարգոյ
նուիրատուաց և չնորհիւ վսեմ. Բա-
կոր Տիրացուեան, Յակոբ Երեմեան
եան, Յակոբ Պաղեան և Մկրտիչ Սա-
րգեան Էֆէնտիներուն:

Քերկութեան սրտի կը տեսնուի
որ Դարձաբերաց—Արեւելեան ընկե-
րութիւն գաւառիս ազգային ման-
կրանոց բարոյական և մտաւոր զար-
գացման հոգն ստանձնելով Տարօնոյ
այլ և այլ տեղեր նորանոր դպրոցներ
կը հաստատուէ: Այս վսեմ նպատակն
արդարեւ արժանի է մեր շէրմ չնոր-
հակալեաց: Այսու կը յուսայ Տարօ-
նոյ թշուառ մանուկը խաւարի իշ-
խանութենէն լուսոյ տաճար մանկւոյ
հոն տեսնել իւր անմահ բարբա-
րաց անունները: Մենք մեր չնորհա-
կալութիւնը մատուցանելով յիշեալ
ընկերութեանց, և անկապան յարա-
տեսութիւն մաղթելով:

Միտմ Ձեզ և աղիւս անձնուէր
Մ. Պ.

Սովեցի կեդրոնական Մասնաժո-
ղովն հետեւեալ հանգանակութեան
ցուցակը զրկած է մեզ հրատարակե-
լու խնդրանքը:

Խմբագիր-Տէր .

Ի նպատակ Հայաստանի սովատանջ
եղբարց Սեբաստիոսապետի և Գաւրմ
բաշայի բարեխիտ յաղդայնոց հան-
գանակեալ նուիրաց ցուցակներն ի
ծոց դրոյս ծրարեալ Ձեր Մեծապետ-
ւութեան յղելով խնդրեմք որ բա-
րեհաճիք Ձեր պատուական լրագրոյն
յառաջիկայ թերթերէն միայն մէջ
հրատարակել: Միտմ յարգանք
ի Գիւմայ սովեցի
Քաղկեդոն Կեդր. Մասնաժողովոյ
15 փետր. 1880 Ատենագիր
Պօղոս Թ. Եւսեան

Ի նպատակ վանայ, Պայագիտի և Ս.
լաչկերտի սովեցի, Սեբաստիոսապետի Մե-
ծապետի անդամոց ջանքը հաւաքեալ
նուէրք:

Արթ. Տ. Մկրտիչ Աւագ քհնյ.	1 75
» Նորենայ Արսէն »	1 50
Մեծ. Սեդալի Մասնաժողովոյ	
Գէորդ Աղասեան	3
Ճանիկ Ղազարոսեան	3
Անանիա Կարապետեան	6
Մ. Գ. Ա. Եղարթ Գալմաթեան	4
Գ. Յ. Եղարթ Տէր Ներսեսեան	5 50
Տիգրան Ս. Քիւզիւքեան	5
Միքայէլ Պատմաճեան	5 50
Յ. Ս. Պ. Կ. Սարգիսեան Եղարթ	5
Յարութիւն Անճեան	5
Գրիգոր Շէյլաեան	2
Ոսկի Գարագոջեան	2

Մեծապետի Տէր	
Յովհ. և Աւագի Պարտիզեան Եղբ.	10
Խաչիկ Աղասեան	5
Մկրտիչ Քեհարիպեան	5
Յ. Մ. Ս. Մ. Եղարթեան Եղբ.	5
Սահակ Յ. Պարսեան	4
Յարութիւն Աւետիքեան	4
Յովսէփ Սանտաճեան	4
Մ. Ստեփան Մ. Խաչերեան	5
Միշրան Աղասեան	5
Շահան Եղարթեան	5
Մ. Եսայի Սիմոնեան	5
Յակոբ Բ. Մարտիրոսեան	5
Գէորդ Եսմէրեան	5
Մ. Վարդան Կ. Գալուստեան	5
Գրիգոր Եղարթեան	5
Յարութիւն Սեբաստի	5
Մ. Վարդան Նախեան	5

Գ. Մ. Մէրամիթեան Եղարթ	5
Յովհաննէս Պէշեան	2
Մ. Ստեփան Պաղտատեան	2
Յակոբ Պ. Փափաղեան	2
Կարապետ Տ. Մետրոպոլիտ	2
Շնորհք Աւետիքեան	2
Յակոբ Քէսէճեան	2
Միքայէլ Թուրքեան	2
Սարգիս »	2
Գրիգոր Յակոբեան	2
Յակոբ Պատմաճեան	2
Մետրոպոլիտ Սեբաստի	2
Պետրոս Կոստանեան	2
Գալուստ Կ. Գալուստեան	2
Պօղոս Աստուածեան	2
Կ. Ս. Սարգիսեան Եղարթ	2
Մ. Կարապետ Աղասեան	2
Յակոբ Աստուածեան	2
Յարութիւն Խաչերեան	2

Մկրտիչ Ա. Սարգիսեան	1 50
Մաքսուտ Թարմեան	1 50
Մ. Յարութիւն Կ. Գալուստեան	1 50
Աւետիս Չարքեճեան	1 50
Արթուր Սեբաստի և ընկերք	1 50
Մետրոպոլիտ Յակոբեան	1 50
Մկրտիչ Աւետիքեան	1
Յարութիւն Փափաղեան	1
Ռուբէն Ս. Պաղտատեան	1
Նշան Սարգիսեան	1
Գրիգոր Մաղուկեան	1
Մ. Գրիգոր Սեբաստի	1

Պաղտատեան Խաչերեան	1
Մ. Խաչատուր Յարգիսեան	1
Մաքսուտ Յարգիսեան	1
Յովհաննէս Աստուածեան	1
Թադէոս Քոյուսճեան	1
Միքայէլ Մ. Ներկոսեան	1
Կիրակոս Յարութիւնեան	1
Գրիգոր Պատմաճեան	1
Մհակ. Յակոբ Ս. Պաղտատեան	1
Կարապետ Ս. Սեբաստի	1
Յարութիւն Մ. Յովհաննէսեան	1
Պետրոս Սեբաստի	1
Մկրտիչ Յ. Պաղտատեան	1

Գրիգոր Եղարթեան	1
Կարապետ Սեբաստի	1
Գէորդ Աւետիքեան	1
Մ. Պետրոս Ա. Մէրամիթեան	1
Պաղտատեան Սեբաստի	1
Կ. Մ. Շ. Եղարթեան Եղարթ	1
Տարթ. Յովհ. Քըրքեճեան	1
Յովհ. Յ. Քիւզեճեան	75
Արթուր Սեբաստի	75
Սեբաստի Սեբաստի	75
Ռուբէն Յակոբեան	75
Պօղոս Մ. Ներկոսեան	75
Յովհաննէս Չարքեճեան	75
Մանուկ Մ. Գալուստեան	50
Մ. Կարապետ Միքայէլեան	50
Թադէոս Գրիգորեան	50
Մկրտիչ Վ. Պաղտատեան	50
Մ. Պետրոս Պ. Փափաղեան	50
Սահակ Չարքեճեան	50
Սարգիս Գէորդեան	50
Գրիգոր Սարգիսեան	50
Յարութիւն Կիւլեան	50
Սարգիս Կեհարցի Փաղտատեան	50
Շնորհք Պէշեան	50
Նշան Պաղտատեան	50
Յարութիւն Նաղարեան	50
Մ. Կարապետ Փափաղեան	50
Գրիգոր Չարքեճեան	50
Կարապետ Ս. Յարգիսեան	50
Մ. Կ. Գ. Սարգիսեան Եղարթ	50
Յովհաննէս Եղարթեան	50
Ռոբոս Յովհաննէսեան	50
Յովսէփ Խաչերեան	50
Գարգիլ Սեփիւնիկ	25
Արթուր Միքայէլեան	25
Կարապետ Միքայէլեան	25
Կարապետ Մետրոպոլիտ	25
Յարութիւն Շէյլաեան	25
Ռուբէն Փափաղեան	25
Մկրտիչ Մ. Կարապետեան	25
Սարգիս Ճէյլաեան	25
Գրիգոր Մարտիրոսեան	25
Յարութիւն Մանուկեան	25
Թադէոս Պէճեճեան	25
Մատթէոս Թադէոսեան	25
Արթիկ Տիկիկ	50
Թադէոս Լաչիսեան	50

Ընդամենը լիւր Օսմանեան 206 25

Համարակալ
Գ. Յ. Յովսէփեան

Նշան Մասնաժողովը զրկած է նա-
և հետեւեալը:

«Կտրիճ Հայոց աշխատաւոր Եղ-
արթ»:

«Անշուշտ գիտէք, Տղայք, թէ
մեր Հայոց աշխարհին բազում քա-
ղաքացի և գիւղորդեցի մէջ՝ ի վան,
ի Պայաղիս և յԱլաշկերտ ահաւոր
հացի կուլ մ'է բրդեր, ու լաց ու
կոծ քաղցն ընդ առաջ, արօրի, մա-
ճի, դռնու շուրջն են պատեր:

«Գրուցէ ի Ձեռք մանք, այս սով-
եալ աշխարհաց լուսալիք, ներկայու-
թեամբ իւրեանց զտոկերոց հաց չի
նուազեցնելու գիտմամբ, յԱստուած
անկալու, գլուխ ի քար նոթեհո-
թեան աստ կ'ապասնէ:

«Ընդհանուր այս ողորմելեաց ի
մէր, առ մուրացութեան աշխարհի
բացնք, Տղայք, հացի տէր մըշա-
կըն ու լաճ այսօր հացի կարօտ եղև
ասացնք, զհացն առնող փոխան
գուլթ սիւնող Աստուծոյ պատիւ,
բաւական նպատակ հաւաքեցնք:

«Սակայն մտածեցէք, Տղայք, թէ՛
հողագործին թէ՛ աշխատաւորին նը-
ուիրեալ օգնութեանց ընտրելագոյ-
նըն յիւր ի նմանոյն հասեալ օգ-
նութիւնն է, ուստի Ձեզ դալ, Տը-
ղայք, և ի համեստ հացեղ պատառ
մի նօթի եղբարցդ. ջամբել արդար
համարեցաք:

«Տուք, ապա մեզ, Կտրիճ որեւրք,
ի հացեղ մաս մի, թող չըջի այս հա-
ցիդ համբաւն ամենայն Հայ արօս-
րէնց, դամուց, ամբարաց մէջ, և տ-
մենայն զիւրական պատառ մի հա-

ցի դէպ յերկին բարձրացնելով դու-
գակչուէ յաշխարհի արեւու զօրու-
թիւնն՝ տեսնել թէ՛ հողագործաց թէ՛
աշխատաւորաց տունն մի է:

«Ընդունեցէք, Կտրիճ եղբարք,
մեր այս հրաւերն, և Ձեր յաղթ
շաղկն որ դորհանապաղ անձնական
շահու կը մերձեցնէք, պահ մ'ալ
եղբարց առաւելանայ բուռն նուիր-
եցէք, յուրախութիւն արկութեա-
նըդ կարօտ և համեստութեանդ
պատուող Հայութեան:»

Ի Գիւմայ սովեցի
Կեդր. Մասնաժողովոյ
Ատենագիր
Պօղոս Թ. Եւսեան Սեբաստի
1880 փետր. 12
Ի Կ. Պօղոս-Գաղիկեդոն

Խաղաղութիւն 2 փետր. 1880

... Խմբագիր .

Մեծապետի Մանուկ Էֆէնտի
Գարամանեան, որ շատ անգամ իւր
առատածեան նուէրներովն օժան-
դակած է Որբանոցին, այս անգամ
ևս հաստատ և անշարժ եկամուտներ
պատրաստելու գիտաւորութեամբ
Մանուկեան մէջ հանգանակութիւն
մը բանալով, իւր նուէրովն հան-
դերձ իւր ծանօթ և բարեկամ Անդ-
ղիացի վանահայրաներէ և գործա-
րանատէրներէ՝ մինչև յարդ. 194, 9-
—Անդղիական ոսկի հաւաքած և առ-
այժմ իւր վաղեմի բարեկամ Մեծա-
պետի ճօրճ ֆրէզիդ որդիք և ըն-
կերութեան քով տարին 0 0 5 տոկոս
սով աւանդած ըլլալը մեզ կ'իմացնէ:

Յիշեալ վսեմ բարեբարիւր և Անդ-
ղիացի աղիւս նուիրատուաց այն ա-
ռատածեանութիւնն անտրուելի որ-
բերուս սրտերուն մէջ անմահ յիշա-
տակ մը գործաց, որոց երախտա-
դէտ սրտին ջերմ չնորհակալիքն
պարտք կը համարեմ հրապարակաւ
յայտնել, մաղթելով որ հաղար ապ-
րին այնպիսիք՝ որ շարունակ որբին
և անտէրին օգնութեան կը դիմեն,
և որոց օժանդակութեամբ մինչ
յայտօր Որբանոցս կանգուն կեցած
կը փայլի ի պարծանս Հայ անուան:

Հաճեցէք, Մեծապետի Տէր,
ներկայս հիւրընկալել Ձեր ազդ օգուտ
թերթին մէջ, որով պիտի կացու-
յանէք յաւատ չնորհապարտ:

Տեսուչ Որբանոցիւ
Սեբաստի Մարտիրոս Ն. Գալմաթեան

Ա. Չ. Գ.

Յառաջիկայ կերակի գիշեր Սա-
մաթիոյ Սանուց ընկերութեան լրա-
րանին մէջ Գեր. Տ. Մաղաբիա Ե. վար-
դապետը պիտի բանախօսէ՝ նիւթ
ընտրելով իրեն «Հայ երկրորդաւոր-
թիւն», և դադարի միջոցներուն ալ
նուազածութիւնը պիտի լինին:

Մուտք արանց համար 2 զըշ ար-
ժաթ. իսկ իրական սեռն աղատ է
մուտք վճարելէ:

Ե. Չ. Գ.

Ընկերութեան պաշտօնական կը-
նիքը մնալով և անդործածելի լինե-
լուն համար, օրերանոր կնիք մը փո-
րագրուեցաւ, որոյ ֆօթոմէ առաջի-
նէն քիչ տարբերութիւն ունի: Ա-
ռաջնոյ կնիքը ընկերութեան հաս-
տատութենէն տարի մ'ետքը (1865)
փորագրուած է, իսկ երկրորդն ըն-
կերութեան հաստատութեան բուն
թուականը (1864) կը կրէ:

1880 յունի. 22 Ի գիւմայ
Գարբերդ Սեբաստեան ընկ-
Ատենագիր Ատենագիր
Գ. Պ. Հ. Թիւֆէնկեան Խ. Մ. Գալմաթեան

ՀԱՆՐԱՊԵՏ ՆՕՐՈ ԽԱՆ